Ղուկաս 17. Մանրամասներ և տեսողական վարժություն

ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԻ ՍԵՄԻՆԱՐԻԱՅԻ ՁԵՌՆԱՐԿ

Ուշադիր կարդացեք Ղուկաս 17.11-14-ը՝ ուշադրություն դարձնելով մանրամասներին

Կարդալուց հետո փորձեք պատասխանել հետևյալ հարցերին՝ առանց սուրբ գրություններին անդրադառնալու։

1. Որքա՞ն մոտ էին կանգնած բորոտները Փրկչին։
2. Ի՞նչ հարցրին բորոտները Փրկիչին։
3. Փրկիչն ի՞նչ ասաց նրանց։
4. Բորոտներից քանի՞սը բավականաչափ հավատք ունեին՝ Փրկչի ասածը կատարելու համար։
5. Բորոտներն ի՞նչ արեցին բուժվելուց հետո։

Պատկերացրեք այն, ինչ կարդում եք

Պատկերացրեք ձեզ բժշկված բորոտներից մեկի փոխարեն։

- Մարդը ի՞նչ կարող է զգալ բորոտությունից բուժվելուց հետո։ Դուք ի՞նչ կզգայիք։
- Ձեր կարծիքով, այս պատմության մեջ բժշկումն ինչո՞ւ տեղի ունեցավ այն ժամանակ, երբ բորոտները գնացին (հատված 14)։
- Ձեր կարծիքով, դուք ի՞նչ կանեիք, եթե գիտակցեիք, որ Փրկիչը բուժել է ձեզ։

ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ
ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐԻ ՍՐԲԵՐԻ
ԵԿԵՂԵՑԻ

© 2022 by Intellectual Reserve, Inc. All rights reserved. Տարբերակ. 2/21: *Luke 17. Details and Visualizing Activity*-ի թարգմանությունը. Armenian. PD60012661 201. Printed in the United States of America.